ՀՀ ԿԳՄՄՆ

<<ԵՐԵՎԱՆԻ ԼԵՈՅԻ ԱՆՎԱՆ Հ. 65 ԱՎԱԳ ԴՊՐՈՑ>> ՊՈԱԿ

ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ՝ ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄՆԵՐ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Ածականի ուսուցումը ըստ Ավետիք Իսահակյանի « Լիլիթ» պատմվածքի

Անուն, ազգանուն՝ Գեղեցիկ Աղաբեկյան

Դպրոց՝ Ավշարի միջնակարգ դպրոց

Դասավանդած առարկան՝ Հայոց լեզու և գրականություն

Ք. Արարատ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն_____2.

Ածականը որպես խոսքի մաս_____4.

Ածականի ուսուցումը_____10.

Եզրակացություն_____17.

Գրականության ցանկ_____18.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Քերականության ուսումնասիրման առարկան: Ինչպես ամեն մի գիտություն, քերականությունը նույնպես ունի ուսումնասիրման իր առարկան, այն է՝ լեզվի քերականական կառուցվածքը: Յուրաքանչյուր լեզու ունի իր երեք բաղադրիչ տարրերը՝ հնչյունական համակարգ, բառապաշար և քերականական կառուցվածք:

Քերականությունը ունի երկու բաժին՝ ձևաբանություն և շարահյուսություն:

Ձևաբանությունն ուսումնասիրում է խոսքի մասերը և դրանց հատուկ քերականան հատկանիշները, բառի ձևերը և դրանց հատուկ քերականական իմաստները:

Շարահյուսությունն ուսումնասիրում է բառերի կապակցության, նախադասության կազմության օրենքները:

Ամեն մի բառ՝ եզակի, մասնավոր, միայն իրեն հատուկ իմաստների հետ միասին արտահայտում է նաև ընդհանուր իմաստ (կամ իմաստներ), որ հատուկ է ոչ միայն տվյալ բառին, այլև բառերի մի ամբողջ խմբի ևս: « Լեզվի բառապաշարը ըստ նրա մեջ մտնող բառերի ամենաընդհանուր իմաստների և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունների բաժանվում է որոշակի խմբերի, որոնք կոչվում են խոսքի մասեր »[1]: Բառի ամենաընդհանուր քերականանական իմաստը խոսքիմասային իմաստն է: Յուրաքանչյուր խոսքի մասի մեջ կարող են միավորվել ամենատարբեր բառային իմաստներ արտահայտող բառեր: Հայերենում խոսքի մասերը տասն են՝ *գոյական, ածական, թվական, դերանուն, բայ, մակբայ, կապ, շաղկապ, վերաբերական, ձայնարկություն:*

Այժմ կփորձենք պատկերացում կազմել ածականի մասին: Ինչպես անվանումն է հուշում, այս բառը կազմված է *ած* արմատից, որն ունեցել է բերել, դնել իմաստները, և *-ական ածանցից:* Ածականի խոսքիմասային տարբերակիչ գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ցույց է տալիս առարկայի հատկանիշ: Այդ հանգամանքը դրվել է ածականի՝ ինքնուրույն խոսքի մաս ճանաչելու հիմքում (այստեղից էլ՝ *ածական* բառը, որ նշանակում է ավելացող, վրան դրվող):

1.Տե՛ս Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան 1970, էջ 71

Մանուկ Աբեղյանը և այլ քերականներ ածական էին համարում բոլոր այն բառերը, որոնք ածականի հետ իմաստային և կիրառական ընդհանրություններ ունեին, այսինքն՝ այն բառերը, որոնք ցույց են տալիս առարկայի հատկանիշ: Ժամանակակից քերականության ըմբռնմամբ պետք է նկատի ունենալ ածականի քերականական ընդհանուր իմաստները, ոչ թե շարահյուսական կիրառությունները: Արդի հայերենում ածականը հաճախ անփոփոխ ձևով հանդես է գալիս մակբայական կիրառությամբ, ինչպես՝ *խիստ* հայացք // *խիստ դատել, բարձր* լեռ // *բարձր* խոսել, *խոնարհ* աղջիկ // *խոնարհ* հետևել: Սա նշանակում , որ ժամանանակակից հայերենում շատ դեպքերում ածականը և մակբայը ձևաբանորեն տարբերակված չեն և նրանց խոսքիմասային պատկանելությունը որոշվում է շարահյուսական կիրառությունից: Այս փաստը դեռևս արձանագրել է պրոֆ. Մ. Աբեղյանը: Նա գրում է. « Մեր մակբայներն ամենամեծ մասամբ դրությամբ միայն մակբայ են: Երբ ածականների ցույց տված հատկանիշը վերաբերում է ոչ թե առարկային, այլ առարկայի հատկանիշին, այն ժամանակ ածականներն առնվում են իբրև մակբայ, կամ թե, երբ ածականը խոսքի մեջ դրվում է ոչ թե մի գոյական անվան վրա, այլ մի ածականի ու բայի վրա, այն ժամանակ ածականը կիրառվում է իբրև մակբայ»[1]: Ըստ այլ վարկածի, ածականը, դրվելով բայի վրա, գործածվում է մակբայաբար: Այս տեսությունն առաջ քաշողներն են Էդ. Աղայանը, Գ. Ջահուկյանը:

Իմաստաբանորեն ածական են կոչվում այն բառերը , որոնք ցույց են տալիս առարկան բնութագրող կայուն հատկանիշ:

Ձևաբանորեն ածականները ժամանակակից հայերենում չթեքվող խոսքի մասեր են: Մինչդեռ գրաբարում ածականները իրենց բուն արժեքով հոլովվել են եզակի և հոգնակի թվերով: Սակայն արդի հայերենում դրանք կարող են գործածվել փոխանվանաբար, այսինքն՝ հոդ են ստանում, հոլովվում *ի* արտաքին թեքման հարացույցով, ունենում են եզակի և հոգնակի թվեր: *Շարահյուսական* մակարդակում ածականները դառնում են գոյականի լրացում՝ որոշիչ, օրինակ՝ *<u>Սաղարթախիտ</u> ստվերների տակ <u>արծաթյա</u> և <u>ծիածանավառ</u> սիրամարգեր էին ճեմում զմրուխտահավերի և ծիրանահավերի հետ:*

Բուն արժեքով գործածվելիս կարող են լինել ստորոգելի: *Բառակազմական* մակարդակում ածականներն աչքի են ընկնում կառուցվածքային բազմազանությամբ, լինում են պարզ և բաղադրյալ, օրինակ՝

Եվ հեռուն <u>երկնաձիգ</u> լեռներն էին սուզվել <u>կապույտ</u> լռության մեջ:

Ածականի դերը մեծ է հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ որպես մակդիր:

1.Տե՛ս Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան , 1965, էջ 129-130

Ածականը որպես խոսքի մաս, կազմությունը, տեսակները և ձևաբանական ու շարահյուսական առանձնահատկությունները





Այն բառերը, որոնք մտնում են ածական անվան խոսքիմասային կարգի մեջ, արտահայտում են առարկայի հատկանիշի հասկացություն, ինչպես՝

-Օ՜, ինչ սիրուն են այս մանր քարերը, ինչ սիրուն գույներ ունեն:

Ածականները կարող են արտահայտել ամենատարբեր բազմազան նշանակություններ՝ գույն (կանաչ, կապույտ), մեծություն (մեծ, փոքր), տարածական ու ժամանակային հարաբերություններ (լեռնային, հեռավոր), նյութի հարաբերություն (փայտե, թղթյա), ներքին ու արտաքին հատկանիշներ (գեղեցկագույն, իմաստուն) և այլն: Բայց այս բազմապիսի իմաստներ արտահայտող բառերը միավորվում են ածական անվան կարգի տակ, և նրանց հատկանշային նշանակությամբ ել պայմանավորված են այդ բառերի շարահյուսական նույն կիրառությունները: Ածականի նման հատկանիշի գաղափար կարող են արտահայտել նաև դերբայական որոշ ձևեր (հարակատարը, ենթակայականը և ապառնի երկրորդ ձևը): Ածականի և բայի տարբերությունն այդ դեպքում այն է, որ ածականի արտահայտած հատկանիշը անկախ է ժամանակի գաղափարից, իսկ բայի արտահայտած հատկանիշին հատուկ է ժամանակային գաղափարը: Հատկանիշի գաղափար կարող են արտահայտել նաև վերացական գոյականները: Այս դեպքում նրանց տարբերությունը կայանում է ածականի ոչ ինքնակա հատկանիշ արտահայտելու մեջ, իսկ գոյականն արտահայտում է ինքնակա, առարկայացված հատկանիշ: « Երբ խոսվում է ածականի անթեքականության մասին, նկատի է առնվում նրա հիմնական որոշչային կիրառությունը: Բայց, ինչպես հայտնի է, ածականները լայնորեն կիրառվում են նաև գոյականաբար»:[1]Ածականի այդ կիրառությունը կոչվում է փոխանվանական, որի դեպքում ածականը հոդ է ստանում, հոլովվում, կազմում հոգնակի թիվ և խոսքում հանդես գալիս գոյականին հատուկ շարահյուսական պաշտոններով (ենթակա, հատկացուցիչ, խնդիր, պարագա և այլն): Օրինակ՝

1.Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր Բ, 1973, էջ 7

Վտակի ափին, ուռենու տակ, տխուր նստել էր Լիլիթ:

Ածականի ձևաբանական հատկանիշներից մեկը նրա համեմատության աստիճաններ ունենալն է: «Կարելի՞ է արդյոք դրանք համարել թեքման ձևեր: Այս հարցն, իհարկե, վեճերի առիթ կարող է տալ: Բաըց թվում է, թե սխալված չենք լինի, եթե ասենք, որ ածականի համեմատության աստիճանները, գոնե հայերենում, բուն թեքման ձևեր համարվել չեն կարող »[1]: Սակայն համեմատության աստիճաններ կարող են կազմել նաև որոշ մակբայներ, օրինակ՝ կամաց-ամենակամաց-ավելի կամաց, և հարակատար դերբայները, օրինակ՝ տանջված-ավելի տանջված-ամենատանջված: Համեմատության աստիճանները մեծապես կապված են բառերի բառային նշանակության հետ: Առարկան տվյալ հատկանիշը կարող է ունենալ նվազ կամ ավել: Դրան համապատասխան՝ լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնցով արտահայտվեւմ են նույն հատկանիշի որակային աստիճանավորումները: Դրանցում գլխավորը բառային միջոցներ են: Կան նաև հատկանիշի աստիճանավորումների արտահայտման այլ միջոցներ ևս, ինչպես՝ բառային կրկնությունը՝ սաստկականության իմաստ արտահայտելու համար (մեծ-մեծ, սուր-սուր, նեղ-նեղ), սաստկական և նվազական իմաստ արտահայտող ածանցները՝- (ա) գույն (մեծագույն), -ին (խորին) , - ավուն (կարմրավուն) և այլն: «Հայ, ինչպես նաև օտար լեզուների քերականությունների մեջ ածականներն ըստ իրենց արտահայտած իմաստի բաժանվում են երկու գլխավոր խմբերի՝ որակական և հարաբերական»[2]:Որակական ածականներն արտահայտում են առարկայի որակական հատկանիշներն անմիջականորեն, ուղղակի կերպով, առանց միջնորդավորվածության, օրինակ՝

Լիլիթ հիացումով դիտում էր գեղանի կարապներին: Նրանց ճկուն, պլաստիկ պարանոցները կախարդել էին իրեն:

Հարաբերական ածականներն առարկաների հատկանիշները արտահայտում են ուրիշ առարկաների միջնորդությամբ, օրինակ՝

Մինչ այդ՝մի զույգ հակինթե թիթեռներ՝ աղամանդե թևերով, եկան և նստան նրա մազերի վրա:

1.Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր Բ, Երևան 1973, էջ 7-8:

2.Տե՛ս Մ.Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1983, էջ 138:

Լեզվաբանական գրականության մեջ հստակորեն նշվում է, որ «որակական և հարաբերական ածականների քերականական սահմանը շատ շարժուն է հարաբերական»[1]:

Ինչպես արդեն նշեցինք, հարաբերական ածականների ցույց տված հատկանիշը միջնորդավորված է: Այս ածականների մեջ հատկանիշն արտահայտվում է առարկայական հարաբերությամբ: Եթե ընդհանուր ձևով սահմանենք հարաբերական ածականների նշանակությունը, ապա կարող ենք ասել, որ նրանք արտահայտում են հարաբերություններ ածականի նյութական բովանդակությունը դրսևորող առարկաների նկատմամբ: Հարաբերական ածականներն արտահայտում են առարկաների *տեղային –տարածական* ՝ լեռնային, դաշտային, գյուղական, ծովափնյա*, ժամանակային*՝ գարնանային, երեկոյան, քառամյա*, ծագման, պատկանելության ու հատկացման* ՝ոսկյա, ձյունե, *ունենալու և չունենալու* ՝ անգլուխ, անհոգի, *նմանության* ՝ալիքաձև, գմբեթարդ, քաղաքատիպ և այլն:

Որակական ածականներն անվանում են տարբեր բնույթի հատկանիշներ՝ *արտաքին-ձևային, ներքին (անձերի համար ՝մտավոր-զգացական)* , իրերի հատկանիշներ, գունային հատկանիշներ և այլն: Օրինակ՝

Ճանապարհի ափերին, հազարաբույր ու հազարաթույր ծաղիկները բյուր-բյուր ձևերով պճնազարդել էին բուրաստանները:

Նշված հատկանիշները առարկան կարող է ունենալ առավել կամ նվազ չափով: Սրանով էլ պայմանավորված՝ որակական ածականներն ունենում են համեմատության աստիճաններ: Հայերենում համեմատության աստիճանների արտահայտման միջոցներ են ածանցումը և սպասարկու բառերը, որոնցով ոչ թե նոր բառեր են կազմվում, այլ միևնույն բառի ձևեր, փոխվում է քերականական իմաստը: Դրանցից մեկը վերլուծական կազմություն է (ավելի հզոր), մյուսները՝ համադրական (ամենահզոր, հզորագույն): Ժամանակակից հայերենում տարբերակվում է ածականի համեմատության երեք աստիճան՝ դրական, բաղդատական, գերադրական:

Դրական աստիճանը սկզբնաձևն է, հատկանիշն արտահայտվում է առանց համեմատության: Դրական աստիճանը սկզբունքորեն տարբերվում է մյուսներից նրանով, որ այս դեպքում արտահայտվում է բացարձակ հատկանիշ, օրինակ

Զգացումի հզոր ու անզուսպ մի ալիք մղում էր Ադամին գնալու և Լիլիթի ոտների տակ փշրվելու:

Եվ բաղցր ձայնով կանչեց կարապներին:

1.Տե՛ս Մ. Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1983, էջ 142

Բաղդատական աստիճանը ցույց է տալիս հատկանիշի առավել կամ պակաս դրսևորումը առարկայի կամ առարկաների մեջ՝ այլ առարկաների համեմատությամբ, օրինակ՝

Քո լեզուն բոլոր սոխակների սիրատարփ երգերն ունի, և բոլոր թռչունների ճռվողյունից ավելի անուշ է քո լեզուն:

Եվ հոտոտում եր նրա անուշաբույր թարմությունը, որ ավելի թարմ եր, քան ցողը:

Բաղդատական աստիճանը կազմվում է վերլուծական եղանակով՝ ավելի բառով, որը դրվում է համեմատվող հատկանիշն արտահայտող ածականի դրական աստիճանից առաջ: *Ավելի*-ով կազմված բաղդատականը ցույց է տալիս առարկայի հատկանիշի առավել լինելը և կոչվում է առավելական բաղդատական: *Նվազ, պակաս, քիչ* և նման բառերով կազմված բաղդադականը կոչվում է նվազական բաղդատական և ցույց է տալիս հատկանիշի նվազ լինելը: Այս աստիճանի իմաստ կարող է արտահայտվել նաև ածանցների միջոցով (-լիկ՝ կարճլիկ, ավուն՝ կապտավուն, ին՝ դյուրին, -գին՝կաթոգին):

Ածականի գերադրական աստիճանը արտահայտում է առարկայի հատկանիշն ամենաբարձր չափով և ունի կազմության համադրական ձևեր: Ժամանակակից հայոց լեզվում կա գերադրական աստիճանի կազմության երկու հիմնական եղանակ՝
1.*Ամենա+ածականի* դրական աստիճան բաղադրությամբ, որն արդի հայերենում առավել կենսունակ է և գործուն: Հատուկ է համարյա բոլոր որակական ածականներին, օրինակ՝

Ես գիտեմ բոլոր շավիղները, և ցույց տվածս է ամենագեղեցիկը:

Գնանք իմ տաղավարը, որ շինել եմ հրաշագեղ սոխակների բներին կից, ամենաշքեղ ծաղիկներով պարուրված:

2.-*Գույն* վերջածանցով: Այս եղանակը գործուն ու տարածված չէ, և այդ ածանցը դրվում է սակավ ածականների վրա:

Գերադրականի իմաստ կարելի է արտահայտել նաև *գեր* նախածանցով (գերհզոր, գերմարդկային), շարահյուսական միջոցներով, հատկապես դրական աստիճանի և *բոլոր, ամեն* բառերի բացառական հոլովաձևերի կապակցությամբ, օրինակ՝

Ադամը գնում էր դրախտի խորքերը, Էիլիթի համար գտնում բերում էր ամենից գեղեցիկ քարերը, բոլորից չքնաղ ծաղիկները:

Աստիճանանիշ այս ածականները հատկանիշի աստիճանն արտահայտում են երկու

նրբերանգներով՝ այլ ածականների նույն հատկանիշի համեմատությամբ և առանց դրա: Ըստ այսմ տարբերակվում են բացարձակ և համեմատական գերադրականներ:

Համեմամատականը կազմվում է *ամենա*-ով, բացարձակը՝*ագույն* վեջածանցով:

Կան գերադրականի արտահայտման շարահյուսական այլ միջոցներ ևս, օրինակ՝ ածականի կրկնության հոգնակի սեռականի կամ բացառականի ձևով, ինչպես՝ *գեղեցիկներից գեղեցիկը // գեղեցիկների գեղեցիկը* և այլն:

ԱԾԱԿԱՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ

Ածականը, ըստ էության, աշակերտներին ծանոթ է դեռևս առաջին դասարանից, որպես հատկանիշ ցույց տվող բառ: Նկատի ունենալով այդ՝ ածականի ուսուցումը պետք է սկսել երեխաների իմացածը վերհիշելուց ու կրկնելուց: Որպես ծանոթ ու հայտնի նյութ, ուսուցումը տանել դեդուկտիվ եղանակով, որը տարրական դասարաններում միշտ չէ, որ կարելի էգործադրել: Իսկ դա անհրաժեշտ է ուսուցման մեջ թարմություն ու հոտաքրքրություն մտցնելու, ուսուցման մեջ միօրինակությունը խախտելու, երեխաներին այլ ձևով մտածել սովորեցնելու համար: Այսինքն՝ ուսուցումը կարելի է սսկսել դոգմատիկ հախորդումից կամ կանոնից, որը նույնպես գործադրելի է տարրական դասարաններում: Հնարավոր է ուսուցումն սկսել նաև զրույցի ձևով՝ հարց ու պատասխանի միջոցով երեխաների իմացածը որոշակի համակարգի բերելու՝ հող ստեղծել հետագա աշխատանքի համար:

Վերհիշելով ածականի մասին իրենց իմացածը՝ աշակերտներն ասում են՝1.առարկայի հատկանիշը ցույց տվող բառերը կոչվում են ածական: 2.ածականներն պատասխանում են *ինչպիսի* հարցին: Այս սահմանումը կամ կանոնը հաստատելու համար ուսուցիչը հանձնարարում է թվարկել վերոհիշյալ հարցին պատասխանող բառեր՝ նկարագրելով շրջապատը, բնությունը, ընկերուհուն և այլն: Աշակերտներից մեկը դրանք գրում է գրատախտակին: Ցանկալի է, որ թվարկված ածականները լինեն բազմազան և հիշատակվեն նաև գոյականների հետ: Գրատախտակին գրված կապակցություններում ուսուցիչն ընդգծում է ածականները՝ հաստատելով դրանց՝ ինչպիսի հարցին պատասխանելը: Ելնելով այդ օրինակներից՝ հայտարարվում է, որ ընդգծված բառերը ածականներ են, որովհետև ցույց են տալիս առարկայի հատկանիշ: Այնուհետև բացատրվում է, թե ինչու են կոչվում ածականներ. Ածական նշանակում է վրան դրվող, ավելացող, հիմքն է –ած-ը, որ ծագում է ածել բառից:

Ածականի քերականական հատկանիշների մասին խոսելիս պետք է աշակերտներին ասել, որ գոյականի և բայի նման որոշակի տարբերիչ հատկանիշ չունենալը ևս ածականի համար բնորոշ ու տարբերիչ հատկանիշ է: Այն թիվ, դեմք, հոլով և ժամանակ չունի, չի հոլովվում և չի խոնարհվում, գոյականի հետ հոլովվելիս ոչ մի փոփոխություն չի կրում: Ածականի մասին տրված այս լրացուցիչ տեղեկությունները հնարավորություն են տալիս մինչ այդ առաջադրված իմաստաբանական սահմանման կողքին տալ նաև նրա ձևաբանական սահմանումը՝ հենվելով նրա քերականական հիմնական հատկանիշների վրա: Այն բառերը, որոնք պատասխանում են *ինչպիսի՞, որպիսի՞, ո՞ր* հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը և չեն հոլովվում ու չեն խոնարհվում, կոչվում են ածական անուն կամ ածական: Այս բնորոշումը երեխաները ոչ միայն պետք է սովորեն, այլև կարողանան բացատրել: Այսպես՝ երեխաները բացատրում են, որ իրենց ընտրած բառերը ածական են, որովհետև պատասխանում են *ինպիսի՞, որպիսի՞, ո՞ր* հարցերին, ցույց են տալիս առարկայի հատկանիշը և չեն հոլովվում ու չեն խոնարհվում և այլն: Հաճախ այսպիսի բացատրությունները շատ ավելին են տալիս երեխաներին, ան կանոնը կամ սահմանումն անգիր անելը:

Այնուհետև աշակերտները ուսուցչի օգնությամբ փորձում են որոշել և խմբավորել թվարկված ածականների տեսակներն ըստ իմաստի՝ քանակ, ձև, չափ, որակ, գույն և այլն: Ապա հանձնարավում է տեղերում գրել մի քանի օրինակներ ևս: Աշակերտներին հուշելու համար կարելի է թվարկել առարկաներ, իսկ նրանք կորոշեն նրանց բոլոր հատկանիշները: Ելնելով իրենց գրած օրինակներից՝ աշակերտները ձևակերպում են ածականը բնութագրող կանոնը: Կարևոր է այն հանգամանքը, որ ածականը բնութագրելիս աշակերտները միշտ նշեն գոյական կամ առարկա անունը՝ « չասեն՝ ածականը ցույց է տալիս հատկանիշ »[1], որովհետև հատկանիշ կարող են ցույց տալ նաև մակբայները և գոյականները: Այս ամենից հետո ուսուցիչը ընդհանրացնում է ածական անվան խոսքիմասային հատկանիշները, ձևակերպում կանոնը: Հաղորդման դասի կարևոր նպատակներից է ուսումնական նյութը աշակերտներին սովորեցնել հենց դպրոցում, դասի ժամանակ: Կարելի է հանձնարարել տասը բոպեանոց շարադրություն գրել, որը կնպաստի յուրացված նյութի ամրապնդմանը, որից հետո կկատարեն վարժություններ: Դրանց օգնությամբ աշակերտների մոտ կզարգանա գրավոր և բանավոր խոսքը:

1.Տե՛ս Ս. Վ. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987, էջ 194

Վարժություն 1.

_Հետևյալ հատվածից դուրս գրել ածականները, դրանցով կազմել մեկական նախադասություն.

Լիլիթ հիացումով դիտում էր գեղանի կարապներին: Նրանց ճկուն, սլացիկ պարանոցները կախարդել էին իրեն: Եվ քաղցր ձայնով կանչեց կարապներին, ու երբ Լիլիթ ծունկի եկավ նրանց փայփայելու, , հանկարծ ջրերի վրա տեսավ մի հրաշալի, մի հրաբողբոջ պատկեր և երբ հասկացավ, որ այդ իր ցոլքն է, սքանչացավ իրենով և հպարտացավ:

Վարժություն 2.

Տրված բաղադրիչների միացումով կազմել ածականներ.

ոսկի	բաց	_____
վախ	դեղին	_____
ավուն	թել	_____
աչք	սիրտ	_____
լայն	ան	_____

Վարժություն 3.

Հետևյալ հատվածից դուրս գրել ածականները, որոշել տեսակը՝ որակական և հաչաբերական.

Ոսկեկեղն ծառերից կախված էին հեշտագրգիռ պտուղները՝ կախարդիչ գույներով ու ձևերով: Իսկ Ադամ ծանր ու հաստատուն քայլերով հետևում էր նրան՝ աչքերը չհեռացնելով նրա կրակե բոցերի պես ծփծփող, ճաճանչագեղ մազերից:

Վարժություն 4.

Գրել հինգական օրինակ որակական և հարաբերական ածականներից, դրանցով կազմել երեքական նախադասություն և որոշել դրանցում ածականների զբաղեցրած շարահյուսական պաշտոնները:

Դասը առավել հետաքրքիր դարձնելու և սովորածը ամրակայելու նպատակով կարելի է առաջադրանք կատարել խաղի ձևով: Դասարանը բաժանել երկու հավասար խմբի, առաջին խմբին հանձնարարել բերել օրինակներ որակական ածականներից, երկրորդ խմբին՝ հարաբերական ածականներից: Որ խումբը, որ առավել շատ կթվարկի, կհամարվի հաղթող, իսկ խմբի անդամները կխրախուսվեն բարձր գնահատականներով: Այսպես ասած պարտված խմբի աշակերտներից ակտիվները ևս կարժանանան այդ խրախուսմանը: Հարաբերական ածականների ուսուցման ժամանակ կարելի է զուգահեռ անցկացնել գոյականի սեռական հոլովի և հարաբերական ածականի միջև, ասենք՝ *հոր* ապտակ // *հայրական* ապտակ[1]: Ըստ այսմ կհանձնարարենք թվարկել նմանատիպ օրինակեր:

Այս խոսքի մասը լավ ճանաչելու և գործնական կարողություններ մշակելու համար ուշադրություն պետք է դարձնել նաև նախադասության մեջ նրա շարահյուսական կիրառությանը: Մի շարք նախադասությունների շարահյուսական ու ձևաբանական վերլուծության միջոցով կարելի է ցույց տալ, որ ածականը խոսքում շատ մեծ գործածություն ունի և կարող է հանդես գալ որպես ենթակայի լրացում, լրացման լրացում և ստորոգյալի մաս: Այստեղից կարելի է եզրակացնել՝ ածականը նախադասության մեջ կատարում է լրացման, իսկ օժանդակ բայի հետ՝ նաև ստորոգյալի պաշտոն[2]:

Ածական անվան մասին արված հասկացությունն ամրակայելու, ինչպես նաև երեխաների մեջ ուսուցված գիտելիքները գործնականում կիրառելու կարողություն մշակելու նպատակով պետք է անցկացնել տարբեր տիպի մարզողական, վերլուծական ու կիրառական վարժություններ՝ հիմք ունենալով ոչ միայն ածականը, այլ նաև գոյականն ու բայը, դրանց կապակցության, համաձայնության և բառային փոխհարաբերության մյուս ձևերը:

Ինչպես գոյական անունն ու բայը, այնպես էլ ածականն անցնելիս հատուկ ուշադրություն պետք է դարձնել բառակազմական կամ խոսքի մասերի փոխանցման վարժությունների վրա:

---

1. Տե՛ս Վ. Ս. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987, էջ 194

2. Տե՛ս Թ. Ջահուրյան, Հայոց լեզու, դասագիրք 3-րդ դասարանի համար, Երևան 1976, էջ 81

Դրանք ոչ միայն բառապաշարի հարստացման ու խոսքի ճոխացման, այլև հենց այդ խոսքի մասերի ճիշտ ըմբռնելու տեսակետից մեծ նշանակություն ունեն: Այսպես, օրինակ, կարելի է տալ *տուն, կենդանի, իմաստ, գույթ, ընկեր, օդ, խելք* գոյականները և պահանջել *ան-* ժխտական նախածանցի միջոցով դրանցից կազմել կամ ստանալ ածականներ (*անտուն, անկենդան, անգույթ, անիմաստ, անընկեր, անօդ, անխելք*): Երբեմն էլ կարելի է տալ միայն ածանցները և հանձնարարել երեխաներին դրանցով բառեր կազմել:

Խոսքի մասերի փոխանցման կամ ածանցների օգնությամբ մի խոսքի մասից մի այլ խոսքի մաս ստանալու այսպիսի մի տախտակի ցուցադրումը և դրա շուրջ տարված բացատրական կամ վերլուծական աշխատանքը մեծ նշանակություն կունենա այդ ուղղությամբ համանման օգտակար աշխատանք կատարելու համար.

ԳՈՅԱԿԱՆ	***ԱԾԱԿԱՆ***	***ԲԱՅ***
համ	համեղ	համովանալ
փայտ	փայտե	փայտանալ
ցավ	ցավալի	ցավել
բուրդ	բրդոտ	բրդոտել
թև	թևավոր	թևավորվել
մազ	մազոտ	մազոտել
ձմեռ	ձմեռային	ձմեռել

Բառածանցման միջոցով խոսքի մասերի փոխանցման այս վարժությունների ընթացքում աշակերտները նախ կրկնում են ածանցների մասին երկրորդ դասարանում իրենց սովորածը և, եթե ճիշտ ու մտածված ձևով է տարվում աշխատանքը, ապա ածանցը ևս դառնում է խոսքի մասի ճանաչման ու տարբերակման քերականական-ձևական հատկանիշներից մեկը: Ածականի կազմության ուսուցման ժամանակ կարելի է կիրառել տարբեր մեթոդներ (ԳՈՒՍ, Մ -աձև աղյուսակ, Տ-աձև աղյուսակ, ԽԻԿ, Զրույց, Ինքնագնահատման աղյուսակ և այլն):

Վարժություններ

Վարժություն 1: Դո՛ւրս գրել ածականները. դրանցից երեքը գործածե՛լ նախադասություններում:

Այս գետի ափին, այս ուռենու տակ
Իմ մանկությունն է անցել երազուն,
Խաղացել է նա գետում այս հստակ,
Ոսկի է փնտրել այս տաք ավազում:
Նա թառել է այս ծառերին դալար,

Երկյուղով մտել այրերը այս մութ

Ու կածաններում այս օձագալար
Թափառել է նա մինչև մայրամուտ։
Եվ իր ծիծաղի ալիքներն է ջինջ
Տվել նա մի օր ջրերին այս խենթ,
Որ ուրախ երգով տարել ամեն ինչ
Ու, սակայն, ոչինչ չեն բերել էլ ետ։
…Ամեն ինչ այստեղ նույնն է մնացել,
Նույն ալիքներն են գալիս ու գնում,
Եվ միայն ուռին ջրին կռացել,
Մի ինչ-որ կորած բան է որոնում։
Վահագն Դավթյան

Վարժություն 2: Գտնե՛լ այն ածականները, որոնց գերադրական աստիճանը –գույն մասնիկով չի կազմվում։
Բարձր, մեծ, տաք, նվազ, թանկ, լավ, ուժեղ, ազնիվ, զվարթ, խոշոր, հին,
բարակ, կոշտ, ուրախ, նոր, քաղցր:

Վարժություն 3: Գրե՛լ տրված գոյականներից յուրաքանչյուրին բնորոշող
երեք ածական։
Նկար, այգի, ծաղիկ, գիրք, գորգ:

Վարժություն 4: Գտնե՛լ որակական ածականները. կազմե՛լ նախադասություններ՝ գործածելով դրանք:
Բարձր, մարմնագույն, աշակերտական, ամուրի, թունդ, լեռնային, բրդյա, պղտոր, տխուր, վճարովի, ցածր, դեղին, ժլատ, նարնջագույն, պատանեկան,
ջրալի, դաշտային, թավշյա, ասվե, ուրախ, քաղցր, անվճար:

Վարժություն 5: Գտնե՛լ ածականները և դրանցով կազմել բառակապակցություններ:

Աղոտ, դերձակ, դժվարին, հոգատար, մանրահատակ, կավ, հաճարենի,
հյուսնություն, լսարան, հանգամանորեն, երկաթ, պողպատե, սնահավատ, դետալ,
գործունյա, բարեգութ, դաժան, ատլաս, չիթ, փայտե, կաղապար, շրջանակ, թղթե:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով՝ ածականի խոսքիմասային տարբերակիչ գլխավոր առանձնահատկությունն այն է, որ ցույց է տալիս առարկայի հատկանիշ: Ժամանակակից քերականության ըմբռնմամբ պետք է նկատի ունենալ ածականի քերականական ընդհանուր իմաստները, ոչ թե շարահյուսական կիրառությունները:

Ածականները կարող են արտահայտել ամենատարբեր բազմազան նշանակություններ: Հատկանիշի գաղափար կարող են արտահայտել նաև վերացական գոյականները: Այս դեպքում նրանց տարբերությունը կայանում է ածականի ոչ ինքնակա հատկանիշ արտահայտելու մեջ, իսկ գոյականն արտահայտում է ինքնակա, առարկայացված հատկանիշ: Ածականի ձևաբանական հատկանիշներից մեկը նրա համեմատության աստիճաններ ունենալն է: Սակայն համեմատության աստիճաններ կարող են կազմել նաև որոշ մակբայներ:

Առարկան տվյալ հատկանիշը կարող է ունենալ նվազ կամ ավել: Դրան համապատասխան՝ լեզվում գոյություն ունեն միջոցներ, որոնցով արտահայտվեւմ են նույն հատկանիշի որակային աստիճանավորումները:

Հայ, ինչպես նաև օտար լեզուների քերականությունների մեջ ածականներն ըստ իրենց արտահայտած իմաստի բաժանվում են երկու գլխավոր խմբերի՝ որակական և հարաբերական:

Բուն արժեքով գործածվելիս կարող են լինել ստորոգելի:

Ածականի դերը մեծ է հատկապես գեղարվեստական գրականության մեջ՝ որպես մակդիր

Գրականության ցանկ

1. Մ.Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, Երևան 1970
2. Մ. Աբեղյան, Հայոց լեզվի տեսություն, Երևան , 1965
3. Մ. Ե. Ասատրյան, ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր Բ, 1973
4. Մ.Ե. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Երևան 1983
5. Ս. Վ. Գյուլբուդաղյան, Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան 1987
6. Թ. Ջահուրյան, Հայոց լեզու, դասագիրք 3-րդ դասարանի համար, Երևան 1976